

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի _____ -ի

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 28-Ի N 165-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N _____-Ն

ՈՐՈՇՈՒՄ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 28-ի «Դատական կարգադրիչի համազգեստի, տարբերանշանների և խորհրդանշանների նկարագրերը սահմանելու մասին» N 165-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) նախաբանում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 147-րդ հոդվածի առաջին մասը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության դատական օրենսգրքի 167-րդ հոդվածի առաջին մասը» բառերով:

2. Որոշման հավելվածի՝

1) 1-ին կետի 12-րդ ենթակետում և 2-րդ կետի 10-րդ ենթակետում «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ» բառերով,

2) 3-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով

3) 4-րդ բաժնի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Դատական կարգադրիչների գլխավոր և առաջատար խմբերի գլխարկանշանները ոսկեգոծ մետաղյա փարթամ դափնեճյուղերով մեծ գլխարկանշաններ են՝ 70x38մմ

չափսերով, որոնց մեջտեղում ատամնավոր էլիպսաձև շրջանակի մեջ պատկերված են դատական կարգադրիչների ծառայության խորհրդանշանի սուրը, վահանը և կշեռքը (Ձև N 13):»,

4) 5-րդ բաժնի՝

ա. 9-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.1-ին կետ.

«9.1. Դատական կարգադրիչների գլխավոր խմբի պաշտոնների լամբակների ներքևի և վերևի եզրագծերից 8 մմ հեռավորությամբ անցնում է 6 մմ լայնությամբ, իրարից 7 մմ հեռավորության վրա գտնվող երկու նարնջագույն լուսաշերտ՝

1) արդարադատության փոխգնդապետի լամբակների երկու լուսաշերտերի վրա, հավասարաչափ հեռավորությամբ, ներքևի աջ անկյունից ուղղահայաց՝ 11 մմ դեպի վերև (Ձև 17.2), ամրացվում է երկու ոսկեգոծ ութանկյուն աստղ՝ 15 մմ տրամագծով (Ձև 17.1).

2) արդարադատության մայրի լամբակների երկու լուսաշերտերի մեջտեղում, ներքևի աջ անկյունից ուղղահայաց՝ 23 մմ դեպի վերև (Ձև 17.3), ամրացվում է մեկ ոսկեգոծ ութանկյուն աստղ՝ 15 մմ տրամագծով:».

բ. 10-րդ կետի 2-րդ և 11-րդ կետի 1-ին ենթակետերում «երեք ոսկեգոծ ութանկյուն աստղ» բառերից հետո լրացնել «՝ 10 մմ տրամագծով» բառերը.

գ. 10-րդ կետի 3-րդ և 11-րդ կետի 2-րդ ենթակետերում «երկու ոսկեգոծ ութանկյուն աստղ» բառերից հետո լրացնել «՝ 10 մմ տրամագծով» բառերը:

3. Որոշումը լրացնել Ձև 17.1, Ձև 17.2 և Ձև 17.3-ով՝ համաձայն հավելվածի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀ

Բ.ՍԱՀԱԿՅԱՆ

2019 թվականի _____

ք.Ստեփանակերտ

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԹԵՐԹ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

ՀՀ	ՇԱՀԱԳՐԳԻՌ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ	ՂԵԿԱՎԱՐԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ	ՍՏՈՐԱԳՐՈՒ- ԹՅՈՒՆԸ	ԹՎԱԳՐՈՒՄԸ
1.	ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ	Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ		
2.	ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ- ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ	Ա. ԼԱԶԱՐՅԱՆ		

Առաջարկությունները և առարկությունները՝

Նախագիծը ներկայացնողը՝

Արցախի Հանրապետության
արդարադատության նախարար՝

Ա. Դանիելյան


Հավելված

Արցախի Հանրապետության կառավարության


2019 թվականի _____ -ի

N _____ -Ն որոշման


Ձև 17.1



Ձև 17.2



Ձև 17.3



Արցախի Հանրապետության նախագահի աշխատակազմի
կառավարության գործերի կառավարչության պետ-
աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ

Ա.Լազարյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 28-Ի N 165-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Անհրաժեշտությունը

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 28-ի N 165-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացումը պայմանավորված է այն Արցախի Հանրապետությունում գործող օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ:

Ակնկալվող արդյունքը

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 28-ի N 165-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը համապատասխանեցվել է 2017 թվականի հուլիսի 21-ին ընդունված Արցախի Հանրապետության նոր դատական օրենսգրքի 152-րդ և 153-րդ հոդվածների պահանջներին:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք

Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության իրավական ակտերի փորձաքննության և օրենսդրության կատարելագործման բաժնի և Արցախի Հանրապետության դատական դեպարտամենտի կողմից:

Արցախի Հանրապետության
արդարադատության նախարար

Ա. Դանիելյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 28-Ի N 165-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 28-ի N 165-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը օրենսդրությամբ սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջում, որի արդյունքում առաջարկություններ կամ դիտողություններ չեն եղել:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ